ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ�currency № 29 - 30 (16225) ՇԱԲԱԹ, 12 ԱՊՐԻԼԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԱՊՐԻԼԻ 9-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՐԿՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 9-ին Վրաստանը նշեց ազգային միասնության, քաղաքացիական համաձայնության եւ հայրենիքի համար զոհվածների հիշատակի օրը:

Արդեն հաստատված ավանդույթի համաձայն, այդ օրը թբիլիսցիները, ի հիշատակ 1989 թվականի ապրիլի 9-ի զոհվածների, ծաղիկներով զարդարեցին խորհրդարանի շենք տանող աստիճանները:

1989 թվականի ապրիլի 9-ը բեկումնային դարձավ Վրաստանի համար: Ուղիղ երկու տարի հետո՝ 1991 թվականի ապրիլի 9-ին, ազգային շարժման առաջնորդ Զվիադ Գամսախուրդիան՝ Վրաստանի ապագա նախագահը, հայտարարեց Վրաստանի անկախության վերականգնման մասին:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Ռուսաթավելու պողոտայում ծաղկեպսակ դրեց ապրիլի 9-ի հուշահամալիրի մոտ, հարգելով այն հերոսների հիշատակը, որոնք զոհվել են 1989 թվականի ապրլիլի 9-ի իրադարձությունների ժամանակ:

«Այսօր մենք միաժամանակ տոնում եւ սգում ենք այն անձնազոհության կապակցությամբ, որը մեր քաղաքացիներն այստեղ դրսեւորեցին հանուն շատ բարձր իդեալի՝ հանուն երկրի անկախության եւ ազատության: Ազատությունն այն բարձրագույն արժեքներից մեկն է, հանուն որի արժե տալ կյանքը: Այսօր մենք տոնում ենք 1989 թվականի ապրիլի 9-ին ողջ ազգի ամբողջականությունը եւ սգում ենք այն ճակատագրի համար, որը վիճակվեց մեր համաքաղաքացիներին»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Այդ օրը Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նախա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԳԵՑ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Ապրիլի 9-ին, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցուն կից տարածքում, թբիլիսահայերի կողմից ծաղիկներ դրվեցին 1989 թվականի ապրիլի 9-ին Թբիլիսիում տեղի ունեցած ողբերգության զոհերի հիշատակին հայ ժողովրդի կողմից կանգնեցված խաչքարին:

... Ողբերգության քառասունեորդ օրը, 1989 թվականի մայիսի 19-ին Հայաստանից ժամանած պատվիրակությունը բերել էր երկու մետր քսան սանտիմետր բարձրության, մի կողմից հայկական, մյուս կողմից վրացական խաչերով եւ խորհրդանշանակ ձեռքսեղմամբ, եղբայրության ու բարեկամության զանգով զարդարված, վարդագույն խաչքար (հեղինակ՝ հայաստանցի քանդակագործ Հարություն Բյուրականցի): Այդ խաչքարը հայ ժողովուրդը ուղարկել էր վրաց եղբորը, ողբերգության քառասունքի առթիվ:

Հենց այդ խաչքարի մոտ, 2014 թվականի ապրիլի 9-ին, ներկայիս Երեւանյան պուրակում, զոհվածների հոգու խաղաղության համար Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ հոգեւոր դասի մասնակցությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Հավարտ արարողության Թեմական առաջնորդը խոսեց հայ-վրացական դարավոր բարեկամության եւ թե' ցավի, թե' ուրախության ժամին միմյանց կողքին լինելու երկու քրիստոնյա ազգերի բարի կամքը:

Այնուհետեւ միջոցառման մասնակիցներն այցելեցին Ռուսաթավելու պողոտա, ծաղկեպսակով զարդարեցին քառորդ դար առաջ տեղի ունեցած ողբերգության զոհերի նախկին խորհրդարանի շենքի դիմաց տեղադրված հուշակոթողը:

Ապրիլի 9-ի զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ անցկացվեցին նաեւ Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ախալցիխեի, Ծալկայի, Մառնեուլիի, Բոլնիսիի շրջաններում:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ԱՌԱՆՑ ՆԱՏՕ-Ի ՀՆԱՐԱՎՈՐ Է ՎՐԱՍՏԱՆԸ ՎԵՐԱՆԱ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԻՑ»

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, ապրիլի 6-7-ին, Վիլնյուսում մասնակցեց Եվրամիության խորհրդարանների նախագահների նստաշրջանի աշխատանքին:

Դավիթ Ուսուփաշվիլին երկրում իրականացվող բարեփոխումների, սոցիալական եւ տնտեսական իրավիճակի մասին զեկուցումով ելույթ ունեցավ արեւելաեվրոպական գործընկերության երկրների միջխորհրդարանական համագործակցության նիստում:

Դավիթ Ուսուփաշվիլին մասնակցեց նաեւ արեւելաեվրոպական գործընկեր երկրների խորհրդարանների նախագահների համատեղ մամլո ասուլիսին, որին մասնակցեցին նաեւ Հայաստանի, Ադրբեջանի, Մոլդովայի, Լատվիայի, Լիտվայի, Ուկրաինայի եւ Բելոռուսի խորհրդարանների նախագահները:

«Առանց ՆԱՏՕ-ի հնարավոր է Վրաստանը վերանա աշխարհի քարտեզից եւ դա կարող է տեղի ունենալ մոտ ժամանակներս»,- ասաց Դավիթ Ուսուփաշվիլին՝

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ

Վրաստանի խորհրդարանի եւ Եվրամիության ֆինանսավորմամբ, սկսվում է նոր նախագծի իրականացումը, որի բյուջեն կազմելու է 1665 հազար եվրո:

Ապրիլի 10-ին Վրաստանի խորհրդարանի Թբիլիսիում գտնվող շենքում, Եվրամիության եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ժողովրդավարության ամրացման նախագծի շրջանակներում, անցկացվեց դրա պաշտոնական շնորհանդեսը:

Խորհրդարանի եւ Եվրամիության ֆինանսավորմամբ, նախագիծը իրականացնելու է ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Ապրիլի 8-ին, Սլովակիայի փոխվարչապետ, արտաքին եւ եվրոպական գործերով նախարար Միրոսլավ Լայչակի Թբիլիսի կատարած պաշտոնական այցի շրջանակներում տեղի ունեցավ Վրաստանում Սլովակիայի դեսպանատան բացման պաշտոնական արարողությունը: Արարողությանը մասնակցեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի եւ Սլովակիայի փոխվարչապետի հանդիպմանն ընդգծվեց երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական կապերի խորացման կարեւորությունը:

Ապրիլի 8-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Սլովակիայի փոխվարչապետ, արտաքին եւ եվրոպական գործերով նախարար Միրոսլավ Լայչակի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր եւ տնտեսական համագործակցության խորացման հեռանկարները: Հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացվեց Ուկրաինայում ծավալվող իրադարձությունների քննարկմանը:

Հանդիպումներին ներկա էին Միրոսլավ Լայչակի

գլխավորած պատվիրակության անդամները, Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, Սլովակիայում Վրաստանի դեսպան Ալեքսանդր Նալբանդովը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Սամցխե-Ջավախեթիի համալսարանը, որը գտնվում է Ախալքալաքիում, ստացել է պետական բուհի կարգավիճակ: Համապատասխան որոշումն ընդունվել է Վրաստանի կառավարության ապրիլի 7-ի նիստում:

«Կատարվել է Սամցխե-Ջավախեթիի ուսումնական համալսարանի վերակազմում: Ավելացվել է երրորդ աստիճանը՝ դոկտորանտուրան, եւ այն դարձել է պետական բուհ: Դա տեղի է ունեցել տարվա ընթացքում համալսարանի կողմից իրականացված ընդգրկուն աշխատանքից հետո: Համապատասխան օգնություն է ցուցաբերվել հանրապետության գիտության եւ կրթության նախարարության կողմից»,- հայտարարել է Վրաստանի գիտության եւ կրթության նախարար Թամար Սանիկիձեն:

ԱՊՐԻԼԻ 9-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՐԿՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գահական նստավայրում Սուրբ Գիորգիի հաղթանակի շքանշաններ պարգեւատրեց 1989 թվականի ապրիլի 9-ի զոհերին: Շքանշանները նախագահը հանձնեց զոհվածների հարազատներին:

25 ամյա վաղեմության իրադարձությունների կապակցությամբ, նախագահը նշեց, որ այդ օրը մեծ ուրախության եւ մեծ վշտի օր է: «Ապրիլի 9-ը Վրաստանի պատմության միակ օրը չէ, որը հպարտության զգացում է առաջացնում: Այս դահլիճում հավաքվածներիդ համար այդ զգացումները տասնապատկված են, քանզի դուք կորցրել եք մերձավորներիդ: Ուստի ես առանձնակի երախտագիտություն եմ հայտնում, որ դուք ձեր ուսերին բարդեցիք մեր այսօրվա հաղթանակների եւ հպարտության ամենածանր բեռը»,- շքանշանների հանձնման արարողությանը հայտարարեց Վրաստանի նախագահը:

Ապրիլի 9-ի զոհերի հուշակոթողի մոտ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը մատուցեց հոգեհանգստի պատարագ: Պատարագին ներկա էին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին՝ ընտանիքով, փոխվարչապետ Կախի Կալաձեն, Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու Դավիթ Նարմանիան:

Ապրիլի 9-ին Վրաստանի կառավարության անդամները ծառատունկ կատարեցին՝ նվիրված 1989 թվականի ապրիլի 9-ին զոհվածների հիշատակին: Գործողությունն իրականացվեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախաձեռնությամբ, «Կանաչ ապագա» ծրագրի շրջանակներում: Գործողությանը մասնակցեցին Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության նախարար Խաթունա Գոգոլաձեն, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, փախստականների հարցերով նախարար Դավիթ Դարախվելիձեն, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին, երիտասարդության եւ սպորտի գործերով նախարար Լեւան Ղիփիանին, գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիան, սփյուռքի գործերով պետնախարար Կոնստանտին Սուրգուլաձեն, առողջապահության փոխնախարար Դմիտրի Մախաթաձեն:

ՎՐԱՍՏԱՆ-ԴԱՆԻԱ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ապրիլի 9-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Դանիայի արտաքին գործերի նախարար Մարտին Լիդեգաարդի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ քաղաքական-տնտեսական համագործակցության եւ հարաբերությունների ոլորտի ընդլայնման հարցերը: Կողմերը քննարկեցին նաեւ պաշտպանության ոլորտում համագործակցության խորացման հեռանկարները:

Ինչպես նշվեց հանդիպմանը, Դանիան մեծ նշանակություն է տալիս Եվրոպայի հարեւանության քաղաքականությանը, արեւելյան գործընկերությանը եւ պաշտպանում է Եվրամիությանը Վրաստանի միտման գործընթացը:

Իր հերթին, վարչապետը վստահություն հայտնեց Դանիայի հետ համագործակցության խորացման հարցում, առանձնակի ընդգծելով այդ երկրի օգնության նշանակությունը, մարդու իրավունքների պաշտպանության, փախստականների օգնության, ազատ լրատվամիջոցների աջակցության եւ տնտեսական օգնության ոլորտում:

Նույն օրը կայացավ նաեւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հանդիպումը Դանիայի ԱԳ նախարար Մարտին Լիդեգաարդի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացման հեռանկարները:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ԱՌԱՆՑ ՆԱՏՕ-Ի ՀՆԱՐԱՎՈՐ Է ՎՐԱՍՏԱՆԸ ՎԵՐԱՆԱ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԻՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ելույթ ունենալով Եվրամիության երկրների խորհրդարանների նախագահների խորհրդաժողովի շրջանակներում Վիլնյուսում անցկացվող արեւելյան գործընկերության երկրների համագործակցության միջխորհրդարանական համագործակցության նստաշրջանում:

«2008 թվականի ապրիլին ՆԱՏՕ-ի գագաթաժողովում ալյանսի անդամ երկրները եկան համաձայնության, որ Վրաստանը կդառնա ՆԱՏՕ-ի անդամ, սակայն խոսք չեղավ մեխանիզմների, լծակների եւ ժամկետների մասին: Համոզված եմ, որ դա դարձավ 2008 թվականի ռուսական ագրեսիայի պատճառներից մեկը: Այսօր մենք գտնվում ենք ավելի բարդ իրավիճակում: Գիտակցում ենք, որ եթե Վրաստանը ՆԱՏՕ-ին ընդառաջ քայլ կատարի, դա կհանգեցնի Ռուսաստանի կողմից հերթական ագրեսիայի: Մենք ռիսկի ենք դիմում եւ այդ պատճառով էլ մեզ անհրաժեշտ է պատասխան, ինչ ձեռնարկվի, եթե հերթական անգամ Վրաստանը դառնա Ռուսաստանի թիրախը»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին:

Նրա հայտարարությամբ, Վրաստանի խորհրդարանը եւ կառավարությունը պատրաստ են համագործակցել Եվրամիության հետ:

Այցի շրջանակներում՝ Վրաստանի խորհրդարանի նախագահը հանդիպումներ ունեցավ Լեհաստանի սեյմի մարշալ Եվա Կոպաչի եւ լեհական սենատի մարշալ Բոգդան Բորուսեւիչի, Իտալիայի սենատի նախագահ Պետրո Գրասոյի, Գերմանիայի բունդեսթագի նախագահ Նորբերդ Լամերտի, Ուկրաինայի նախագահի պաշտոնակատար Ալեքսանդր Տուրչինովի, Լիտվայի սեյմի նախագահ Լորետա Գրաուժինենի, պաշտոնատար այլ անձանց հետ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 8-ին վարչապետ Իրակլի Ղարիբավիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Վրաստանում գտնվող ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Նիլսոն Սքոթի հետ:

Վարչապետը հյուրին ներկայացրեց տեղեկատվություն Վրաստանի սոցիալ-տնտեսական զարգացման, ռազմավարության մասին եւ նշեց, որ այն ուղղված է երկրի մասնավոր հատված մրցունակության բարձրացմանը եւ ֆինանսավորման մատչելիությանը: Վարչապետը հույս հայտնեց, որ այդ առումով օգնություն կհատկացվի ՄԱԿ-ի զարգացման ծրագրից: Իրակլի Ղարիբաշվիլին ընդգծեց, որ իշխանությունների գլխավոր առաջնահերթություններն են մարդու իրավունքները, Եվրատլանտյան ինտեգրումը, հանրային գերատեսչությունների թափանցիկությունը եւ հաշվետվությունը:

Հանդիպմանը ներկա էր նաեւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի տեղակալ Ինիտա Պաուլովիչը:

ԵՎՐԱԽՈՐՀՐԴ

ԸՆԴՈՒՆՎԵՑ ԲԱՆԱՁԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) մինչեւ տարեվերջ Ռուսաստանի պատվիրակությանը բացառել է իր բոլոր ղեկավար մարմիններից՝ ՌԴ-ին Ղրիմի միացման պատճառով:

Խորհրդարանականները պաշտպանեցին Վեհաժողովի մոնիթորինգի հանձնաժողովի ղեկավար Շտեֆան Շտեննահի զեկույցը, որով առաջարկվում էր բավարարվել պատժամիջոցների այսպես կոչված մեղմ տարբերակով եւ ՌԴ-ի պատվիրակությանը ԵԽԽՎ-ի նիստերում ձայնի իրավունքից զրկել մինչեւ տարեվերջ: Վեհաժողովին Ռուսաստանի անդամակցությունը սառեցնելու առաջարկը, որով հանդես էր եկել բրիտանացի Ռոբերտ Ուոլթերը, հավանության չի արժանացել:

Սակայն քննարկման արդյունքում բանաձեւի տեքստում ուղղում կատարվեց՝ մինչեւ տարեվերջ ՌԴ-ի պատվիրակությանը Վեհաժողովի ղեկավար մարմիններում՝ բյուրոյում, նախագահական մշտական կոմիտեում աշխատելու, ինչպես նաեւ ԵԽԽՎ-ի դիտորդների առաքելություններին մասնակցելու իրավունքից զրկելու մասին:

ՌԴ պատվիրակությունում պատժամիջոցները գնահատել են անարդարացի ու անհիրավազոր: Ինչպես նշել է պատվիրակության ղեկավարի տեղակալ Լեոնիդ Սլուցկին, այն «հարցականի տակ է դնում 2014 թվականին ԵԽԽՎ-ի հարթակում ՌԴ-ի պատվիրակության աշխատանքը»: Ռուսաստանի լիազորությունների քննարկման ընթացքում ՌԴ պատվիրակությունն ամբողջ կազմով բացակայել է ԵԽԽՎ-ի նիստերի դահլիճից:



ՈՒԿՐԱԻՆԱ

ՔԱՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

ԵՄ-Ռուսաստան-Ուկրաինա-ԱՄՆ հանդիպումը «հաջորդ շաբաթ կանցկացվի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների մակարդակով»: Այդ մասին հայտարարել է Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի մամուլի ծառայությունը՝ ամփոփելով ՌԴ-ի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի հետ ապրիլի 8-ին նրա ունեցած հեռախոսազրույցի արդյունքները: Այդ հանդիպման ստույգ ամսաթիվն առայժմ չի նշվում: «Ուկրաինայի իրադրությանը գնահատական կտրվի նաեւ Եվրամիության 28 երկրների ԱԳ նախարարների ապրիլի 14-ի հանդիպմանը»,- նշվում է հաղորդագրության մեջ:

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԵՂԱՑՎՈՒՄ Է

Գերագույն ռադան ընդունել է օրենք «Ուկրաինայի Քրեական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին» (Ուկրաինայի ազգային անվտանգության հիմքերի դեմ հանցագործությունների կատարման համար պատասխանատվության ուժեղացման վերաբերյալ):

Օրենքի դրույթների համաձայն՝ այն կանխամտածված գործողությունները, որոնք կատարվել են տարածքային կամ պետական սահմանների փոփոխման նպատակով, ի խախտումն Ուկրաինայի Սահմանադրությամբ սահմանած կարգի, ինչպես նաեւ նման գործողությունների հրապարկային կոչերը կամ դրանց կատարման կոչերով նյութերի տարածումը պատժվում են 3-ից մինչեւ 5 տարվա ազատազրկմամբ (նախորդ օրենքը նախատեսում էր պատիժ՝ մինչեւ 3 տարի ժամկետով ազատության սահմանափակում կամ նույն ժամկետով ազատազրկում): Նույն այդ գործողությունները, որոնք հանգեցրել են մարդկանց մահվան կամ այլ ծանր հետեւանքների, պատժվում են 10-ից մինչեւ 15 տարի ժամկետով ազատազրկմամբ կամ ցմահ բանտարկությամբ (նախորդ պատիժը ազատազրկում էր նախատեսում 7-ից մինչեւ 12 տարի ժամկետով):

ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ Է ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱԶԻ ՆԵՐՄՈՒՄԸ

Ուկրաինան կասեցրել է ռուսական գազի ներմուծումը: Այդ մասին նախարարների կաբինետի ապրիլի 9-ի նիստից առաջ հայտարարել է Ուկրաինայի էներգետիկայի եւ ածխարդյունաբերության նախարարի պաշտոնակատար Յուրի Պրոդանը: Նա դա բացատրել է նրանով, որ ուկրաինական կողմին չի բավարարում գազի գնի այն մակարդակը, որը «Գազպրոմի» կողմից սահմանվել է ապրիլի 1-ից:

Դրա հետ մեկտեղ նախարարը հավելել է, որ Ուկրաինան ռուսական կողմի հետ բանակցություններ կվարի հին գնի վերականգնման շուրջ, որը եղել է 2014 թվականի առաջին եռամսյակում: Պրոդանը հայտնել է, որ «մարտ ամսվա համար մենք գազի դիմաց դեռ չենք վճարել»: Պարտքը կազմում է ավելի քան 550 միլիոն դոլար:

ԻՍՊԱՆԻԱ

ԿԱՏԱԼՈՆԻԱՅԻՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՄԵՐԺՎԵԼ Է

Իսպանիայի խորհրդարանի ստորին պալատը՝ Պատգամավորների կոնգրեսը, մերժել է Կատալոնիայի ինքնիշխանության շուրջ հարցում անցկացնելու ինքնավար մարզի առաջարկը: 350 պատգամավորներից 299-ը դեմ են արտահայտվել այդ առաջարկին, քանի որ այն, ինչպես հայտարարել է Իսպանիայի կառավարության նախագահ Մարիանո Ռախոյ Բրեյը, «խախտում է Սահմանադրության այն դրույթը, ըստ որի՝ Իսպանիայի ինքնիշխանությունը պատկանում է նրա բոլոր քաղաքացիներին, այլ ոչ թե միայն մի մասին»: Իսպանիայի խորհրդարանում Կատալոնիան ներկայացնող 48 պատգամավորներից 26-ը դեմ են քվեարկել անկախության շուրջ ինքնուրույն հանրաքվե անցկացնելու ինքնավար մարզի իրավունքին:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նախագծի շնորհանդեսին ներկա էին Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Վրաստանում Եվրամիության եւ ՄԱԿ-ի ներկայացուցչությունների ղեկավարները: 2,5 տարվա համար նախատեսված նախագիծը նպաստելու է եվրոպական գործընկերների հետ խորհրդարանի համագործակցության զարգացմանը, միջազգային բարձր կարգի խորհրդականների հրավիրմանը, եվրոպական ինտեգրման մասին հանրային բանավեճերի անցկացմանը: Այն նախատեսում է նաեւ բյուջեի նկատմամբ վերահսկողության եւ հասարակայնության հետ կապերի հարցերում խորհրդարանի աջակցությունը:

Միաժամանակ, Եվրամիությունը եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը օրենսդիր մարմնին կօգնեն ինստիտուցիոնալ բարեփոխումների անցկացմանը եւ աշխատակարգի կարգավորմանը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱԼՅԱՆՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՇԱԲԱԹԸ

Վրաստանում ապրիլի 7-ից մինչեւ 16-ը կանցկացվի «ՆԱՏՕ-ի շաբաթ»: Հյուսիսատլանտյան դաշինքին նվիրված միջոցառումների շարքը մեկնարկեց «Ճանապարհ դեպի ՆԱՏՕ. Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպաների փորձը» միջազգային խորհրդաժողովով:

Այն բացեցին եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներում Վրաստանի ինտեգրացման հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի՝ ժողովրդական դիվանագիտության հարցերով օգնական Կոլինդա Գրաբար-Կիտարովիչը:

Ապրիլի 8-ին, ՆԱՏՕ-ի շաբաթվա շրջանակներում, Թբիլիսիում անցկացվեց «Վրաստանի մասնակցությունը միջազգային առաքելություններին» բրոշյուրի շնորհանդեսը: Նույն օրը Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանում կազմակերպվեց «Վրացական բանակի զարգացման պատմությունը» ցուցահանդեսը: Վրաստանի տարածաշրջաններում «ՆԱՏՕ-ի շաբաթվա» շրջանակներում կանցկացվեն տարբեր միջոցառումներ՝ ՆԱՏՕ-ի դաշնակցային գրասենյակի եւ եվրոպական ու եվրատլանտյան կառույցներում Վրաստանի ինտեգրացման հարցերով պետնախարարի աշխատակազմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԵԼ Է 81 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

Ապրիլի 11-ին Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիան նախարարի պաշտոնում անցկացրեց իր եզրափակիչ մամլո ասուլիսը:

Նա խոսեց մեկուկես տարվա ընթացքում կատարած աշխատանքների, ընթացիկ նախագծերի եւ առաջիկա ծրագրերի մասին:

«Դուք հավանաբար հիշում եք մի շարք հիմնախնդրային նախագծերը, որոնք մեզ փոխանցվեցին նախորդ կառավարությունից եւ, որոնք մենք շարունակեցինք: Ձեզ կներկայացնենք մի շարք հետաքրքիր թվեր, որոնք բնութագրում են մեր նախարարության մեկուկես տարվա աշխատանքը: 2012 թվականի համեմատությամբ, 2013 թվականին կատարվեցին 130 միլիոն լարի ավելի գումարի ենթակառույցային աշխատանքներ: 2013 թվականին տարբեր ենթակառույցների վերականգնման համար ծախսվեց 80 միլիոն լարի: Վերանորոգվել է ավելի քան 16 կիլոմետր երկրորդ կարգի ճանապարհ, աշխատանքներ են տարվել ճեպընթաց ավտոմայրուղիների երեք հատվածներում: Մի շարք մունիցիպալիտետներում սկսվել է ջրամատակարարման կարգավորման խոշոր նախագծեր, 28 մունիցիպալիտետներում ջրամատակարարումը կարգավորվել է: Նշանակալի տեղաշարժեր կան նաեւ կենցաղային մնացորդների հիմնախնդրի լուծման ուղղությամբ»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

Նրա խոսքերով, տեղական ինքնակառավարումները, ենթակառույցային նախագծերի կատարման համար ստացել են 81 միլիոն լարի:

Մամլո ասուլիսի ավարտին Դավիթ Նարմանիան հայտարարեց, որ ինքը նախարարի պաշտոնից կհեռանա տեղական ինքնակառավարման ընտրությունների անցկացման ամսաթվի պաշտոնական հայտարարումից անմիջապես հետո:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱԼԵՌ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԿԱՎԵԼԱՆԱ

Վրաստանի կառավարությունը որոշում է ընդունել ավելացնել բարձրալեռ շրջանների բուժհաստատությունների ֆինանսավորումը:

Ինչպես կառավարության նիստի ավարտից հետո հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն, գործարարության տեսանկյունից բարձրալեռ շրջաններում հիվանդանոցները չեն կարող լինել եկամտաբեր, սակայն պետությունը պարտավոր է պահպանել այդ վայրերում ներկայացվող սպասարկումները: «Բարձրալեռ եւ առանձին շրջաններում գործող հիվանդանոցները գործարարության առումով չեն կարող լինել եկամտաբեր, հասկանալի պատճառներով նվազ է հիվանդների հոսքը, հետեւաբար գործարարության համար դրանք հետաքրքրություն չեն ներկայացնում, սակայն պետությունը պարտավոր է այդտեղ պահպանել սպասարկումները: Այդ պատճառով կառավարությունը մինչեւ օրս հատկացնում է հատուկ ֆինանսավորում առկա պակասորդի վերացման համար: Ներկայումս մենք նշանակալիորեն ավելացնում ենք այդ ֆինանսավորումը, գործնականում կրկնապատկում ենք, որպեսզի անմիջականորեն կարողանանք վարձել եւ ֆինանսավորել այն բժիշկներին, մասնագետներին, ում պակասորդը զգացվում է այդ շրջաններում»,- հայտարարեց Դավիթ Սերգեյենկոն:

Նախարարի տեղեկատվությամբ, կառավարությունը հաստատել է նաեւ գյուղական բժշկի, վիտամիններով եւ միկրոտարրերով հղիների ապահովման ֆինանսավորման 30 տոկոսանոց աճը եւ տուբերկուլյոզի բուժման նոր կենտրոնի բացման ու երեխաների հոգատարության պետական նոր ծրագրի ֆինանսավորումը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՄՆՎՈՒՄ Է ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին ստորագրել է տեղական ընտրությունների համար միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման մասին հրամանագիրը:

Դրույթի համաձայն, միջգերատեսչական հանձնաժողովը գլխավորելու է նախագահը: Դրա կազմում կընդգրկվեն ներքին գործերի, արտաքին գործերի, ֆինանսների, պաշտպանության, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների, քրեակատարողական եւ պրոբացիայի, առողջապահության փոխնախարարները: Հանձնաժողովի քարտուղար կնշանակվի արդարադատության փոխնախարարը:

Միջգերատեսչական հանձնաժողովի նպատակն է կանխել հանրային ծառայողների կողմից ընտրական օրենսդրության խախտումները, արձագանքել խախտումների բացահայտված փաստերի հարցով, դրանով իսկ ապահովել ազատ եւ արդարացի ընտրական միջավայր: Այդ նպատակով հանձնաժողովը համագործակցելու է ընտրական սուբյեկտի, ընտրությունների մասնակից քաղաքական ուժերի, տեղական եւ միջազգային կազմակերպությունների, դիտորդների, շահագրգռված այլ անձանց հետ:

Միջգերատեսչական հանձնաժողովը կհավաքվի անհրաժեշտության դեպքում եւ բոլոր դեպքերում շաբաթական երկու անգամ, իսկ ընտրական սուբյեկտների գրացման ժամակետի սպառումից հետո՝ շաբաթական մեկ անգամ: Միջգերատեսչական հանձնաժողովն աշխատանքը կդադարեցնի նրանից հետո, երբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կհայտարարի ընտրությունների պաշտոնական արդյունքները: Հիշեցնենք, որ Վրաստանում տեղական ինքնակառավարման ընտրությունները կանցկացվեն հունիսի 15-ին:



ԱՆՑԿԱՑՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Ապրիլի 9-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց տնտեսական խորհրդի նիստ: Նիստում քննարկվեցին տնտեսական ընթացիկ հարցերը, եւ կանխագծվեցին առաջիկայի ծրագրերը: Նիստում քննարկվեցին նաեւ երկրում ներդրումային միջավայրի բարելավման, առկա հիմնախնդիրների կարգավորման, զբոսաշրջության զարգացման եւ արտահանման աջակցության հարցերը:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱՊԱՀՎՈՒՄ Է ՆԱԽԱԳԱՀԻՆ

Վրաստանի նախագահին շնորհվում է քաղաքացիության հանձնման հետ կապված էքսկլուզիվ իրավասություն: Այդ մասին հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

«Վրաստանի նախագահը լուծում է քաղաքացիության եւ քաղաքական ապաստարանի հանձնման հետ կապված հարցերը: Պետության ղեկավարն ապահովում է քաղաքացիության ոլորտում միասնական պետական քաղաքականության անցկացումը: Նախագահը որոշում է ընդունում օտարերկրյա քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց քաղաքացիության շնորհման, քաղաքացիության վերականգնման, վրացական քաղաքացիությունից դուրս գալու հետ կապված հարցերը»,- հայտարարեց նախարարը:

ԳԻԼ ԳՎԱԶԱՎԱՆ՝ ԱԲԽԱԶԻԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ապրիլի 7-ին Աբխազիայի ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ վերընտրվեց 62-ամյա էլգուջա Գվազավան: Նա 14-9 ձայների հարաբերակցությամբ հաղթեց ընդդիմախոս Թամազ Խուբուային:

Ընտրություններն անցկացվում էին Գերագույն խորհրդի մոտ անցկացվող բողոքի ցույցերի պայմաններում: Ոչ կառավարական կազմակերպությունները բողոքարկում էին էլգուջա Գվազավայի թեկնածությունը:

ՄՑԽԵԹԱՆ՝ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔ

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի օծմամբ, Մցխեթային շնորհվել է Սուրբ քաղաք տիտղոսը: Ինչպես կիրակնօրյա իր քարոզում նշեց Իլիա Երկրորդը, ընդունվել է որոշում, ըստ որի, վերականգնվում է Մցխեթա քաղաքի տիտղոսը, եւ այն այսուհետեւ կկոչվի Սուրբ քաղաք, Սուրբ մայրաքաղաք: Վերոնշյալ որոշման հիմք ծառայեց առաջին Կաթողիկոս-Պատրիարք Մելիքսեթ Առաջինի կտակը, որը կազմվել էր 11-րդ դարում:

ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Ապրիլի 15-ից Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում մեկնարկում են վնասատուների դեմ պայքարի միջոցառումները: Ինչպես հայտարարեցին բնապահպանության նախարարությունում, միջոցառման շրջանակներում կանցկացվի միջատների որսման, ֆերոմոնային սարքերի տեղադրումը: Միաժամանակ, անցկացվում են Խարագաուլիի անտառային տեղամասի գույքագրման, ինչպես նաեւ Ադիգենիի եւ Ախալքալաքիի անտառային տեղամասերի գույքագրման մրցույթի անցկացումը:

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ

Վրաստանի պարենամթերքի գործակալությունն սկսել է ընտանի կենդանիների զանգվածային պատվաստումը: Այն իրականացվում է պետական նպատակային ծրագրի շրջանակներում, երկրի ողջ մասշտաբով կպատվաստվեն 1528432 գլուխ անասուն: Կենդանիների պատվաստումն անվճար է, իսկ պատվաստանյութը նրանց վտանգ չի սպառնում:

ԱԳՆ-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«ՌՈՒՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՓԱՍՏԵՐ ՉԵՆ ԳՐԱՆՑՎԵԼ»

Վրաստանի առաջատար թերթերում Սամցխե-Ջավախեթիի բնակիչներին ռուսական անձնագրեր բաժանելու ապատեղեկատվության տարածմանն ի պատասխան՝ Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ պաշտոնական հերքումով:

«Օրերս տեղեկություն է տարածվել այն մասին, թե իբր ռուսական կողմն սկսել է անձնագրեր բաժանել Սամցխե-Ջավախեթիի բնակչությանը: Մենք վերստուգել ենք այդ տեղեկությունը եւ պարզվել է, որ այն չափազանցված է, նման փաստեր չեն գրանցվել: Մինչդեռ Վրաստանում ուշադրությամբ հետեւում են Ռուսաստանում կատարվող իրադարձություններին: Խոսքը վերաբերում է Ռուսաստանի Պետդումայի՝ Ռուսաստանի քաղաքացիություն ստանալու պարզեցված ընթացակարգի քննարկումներին: Մենք դեռեւս չունենք նախագծի վերջնական տարբերակը, բայց իրավաբանների կողմից դրա ուսումնասիրումից հետո, եւ մեր երկրի շահերի դեմ ուղղված որեւէ դրույթների բացահայտման դեպքում Թբիլիսին ստիպված կլինի պաշտոնապես հակազդել դրանց համապատասխան իրավական դրույթներով»,- ապրիլի 7-ին հայտարարել է Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Դավիթ Զալկալիանին:

Հատկանշական է, որ մարտի 24-ին Վրաստանի առաջին նախագահի որդու՝ Կոնստանտինե Գամսախուրդիայի կողմից անձնագրերի հետ կապված ապատեղեկատվությունը դրա տարածումից անմիջապես հաջորդ օրը վրացական ԶԼՄ-ների մի մասը առանց փաստերի ստուգման, այն մատուցեց իր ընթերցողներին:

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ՆՊԱՏԱԿԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է

Հայաստանի «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) պատվիրակությունը Թբիլիսիում մասնակցել է երկօրյա համաժողովին՝ նվիրված «Բարձրագույն կրթության համադրելիության եւ միջազգայնացման խթանում» (PICQA) ծրագրի արդյունքների ամփոփմանը:

Համաժողովին իրենց հայեցակետը ներկայացրին հայաստանյան Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը, Երեւանի պետական ճարտարագիտական համալսարանը եւ Ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղը: PICQA-ն TEMPUS-ի իրականացրած եռամյա ծրագիր է, որը կոչված է Հայաստանում եւ Վրաստանում բարձրագույն կրթության որակի ապահովման բարձրացմանը: Ծրագրի իրականացման ընթացքում երկու երկրների բուհերը սերտորեն համագործակցել են, բուհական համակարգերի միջեւ համագործակցության եզրեր են ստեղծվել, ձեւավորվել է վստահության եւ փոխգործակցության մթնոլորտ:

ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ

Ա.ՃԻԿԱԻՃԵ. «ՆԱ, ՈՎ ԿՓՈՐՁԻ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՆԵԼ ԻՐԱՎԻՃԱԿԸ, ԿՊԱՏԺՎԻ ՈՂՋ ԽՍՏՈՒԹՅԱՄԲ»

«Նա, ով կփորձի ապակայունացնել իրավիճակը, կպատժվի ողջ խստությամբ»,- այդ մասին «Պրայմթայմ» թերթին տված հարցազրույցում հայտարարել է Վրաստանի ներքին գործերի նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն եւ հավելել, որ «որոշակի ուժեր Վրաստանում փորձում են մոտ ժամանակներս ապակայունացնել երկրի իրադրությունը իշխանափոխության նպատակով»:

Ալեքսանդր Ճիկաիձեի խոսքով՝ վերջերս Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին «հնչեցրել է երկրում տեղական «եվրամայդանի» ստեղծման գաղափարը: Մենք տեղեկատվություն ունենք այն մասին, որ այս գաղափարը քննարկվում է նաեւ «Միասնական ազգային շարժում» նախկին կառավարող կուսակցության ներսում»,- ասել է Ճիկաիձեն:

«Վրաստանում որոշակի ուժեր, տեղական մի շարք ոչ կառավարական կազմակերպությունների օժանդակությամբ փորձում են մարդկանց դուրս բերել փողոցներ, ստեղծել քաոս, իսկ իրենք մտադիր են կրակ բացել այդ ակցիաների մասնակիցների վրա, իսկ այնուհետեւ դրանում մեղադրել իշխանություններին»: Նրա խոսքով՝ «նրանք արդեն Վրաստան են բերել ուկրաինական «եվրամայդանի» ակտիվիստների, այդ ուժերն անցկացնում են վարժանքներ եւ նախապատրաստում իրենց պլանների իրագործումը»: «Տեղեկատվություն կա այն մասին, որ այս գաղափարի կողմնակիցներն արդեն գնել են ավտոդողեր, որոնք կայրեն ակցիայի ժամանակ»,- ասաց նա:

«Սակայն, համոզված եմ, որ հասարակայնության ճնշող մեծամասնությունը իրավիճակի ապակայունացում չեն ցանկանում եւ դա թույլ չեն տա, քանզի Վրաստանն ընտրել է զարգացման իրատեսական ուղի: Գլխավոր խնդիրը, որը անհրաժեշտ է կարգավորել, դա սոցիալ-տնտեսական իրավիճակն է եւ ես վստահեցնում եմ, որ Վրաստանի կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում է հարցի լուծման համար: Հուսով եմ, որ մեր ընդդիմախոսները կգիտակցեն, որ պայքարի նման մեթոդները մեր երկրին օգուտ չեն բերի»,- նշել է նախարարը:

Մեկնաբանելով Վրաստանի ՆԳ նախարարի հայտարարությունը, «Միասնական ազգային շարժում»-ից խորհրդարանի պատգամավոր Գիորգի Բարամիձեն այն համարում է ոչ լուրջ: «Անձամբ ես, ինչպես նաեւ իմ բարեկամները, երբեք չենք մասնակցի պետության դեմ զինված գործընթացին: Մենք դա ասում էինք այն ժամանակ, երբ գտնվում էինք իշխանությունում եւ նույնը կրկնում ենք հիմա»,- ասել է Բարամիձեն:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, մեկնաբանելով ՆԳ նախարարի երկրում իրավիճակի հնարավոր ապակայունացման մասին հայտարարությունը, հայտարարեց, որ «Վրաստանում ոչ ոք իրարանցում կազմակերպել չի կարող: Եթե ինչ-որ մեկը փորձի դա անել, նա կպատժվի օրենքի ողջ խստությամբ: Ներքին գործերի նախարարը խոսեց հնարավոր սպառնալիքի եւ այն ցանկություններին մասին, որոնք կարող են ունենալ առանձին անձինք»,- հայտարարեց վարչապետը:

Իր հերթին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, մեկնաբանելով ՆԳ նախարար Ալեքսանդր Ճիկաիձեի հայտարարությունը, նշեց, որ «Արմատական խմբեր կարող են լինել ամենուրեք եւ դրանց չեզոքացումն իրավապահ մարմինների գործն է»:

ԿՐԹԱԿԱՆ

ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՉԵ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՇԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ է ԸՆՁԵՌՈՒՄ»

Ուսանողները, ովքեր մինչեւ 2014 թվականի գարնանային զորակոչը սեփական ցանկությամբ կծառայեն բանակում, կստանան ուսման գրանտներ:

Վրաստանի կառավարության ընդունած որոշման համաձայն, բակալավրիատի հանրակրթական ծրագրով պետական ֆինանսավորմամբ կապահովվեն այն ուսանողները, ովքեր 2012 եւ 2013 թվականներին հանձնել են միասնական ազգային քննությունները, հաղթահարել նվազագույն իմացության մակարդակը, ընդունվել հավաստագրված բուհերի հանրակրթական ծրագրերում եւ չեն ստացել կամ մասնակիորեն են ստացել ուսման պետական գրանտը ու սեփական ցանկությամբ մինչեւ 2014 թվականի գարնանային զորակոչը ստանձնել են տասներկու ամսով Վրաստանի պաշտպանության զորամիավորումներում զինվորական պարտադիր ծառայությունն անցնելու պարտավորություն:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունն ու Վրաստանի պաշտպանության նախարարությունը, վերոնշյալ որոշման կատարման նպատակով պետք է ապահովեն համապատասխան միջոցառումների իրականացումը: Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությունը, զորակոչվող քաղաքացիների թվաքանակում պետք է հաշվի առնի Վրաստանի պաշտպանության նախարարության զինված ուժերում զորակոչված վերոնշյալ կոնտինգենտի ուսանողների թիվը:

«Փաստ է, որ, ելնելով երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից, շատ ընտանիքներ ի վիճակի չեն վճարելու բարձրագույն ուսումնական հաստատություններում իրենց երեխաների ուսուցման վարձը եւ կառավարության այդ որոշումը ժամանակին ու հրատապ է: Կառավարության որոշումը շատ երիտասարդների բարձրագույն կրթության ստացման հնարավորություն է ընձեռում: Ավելացնեմ նաեւ, որ վերոնշյալ արտոնության շնորհման իրավասությունը պատկանում է պետությանը, կառավարությանը: Կառավարության որոշմամբ, նորմատիվ ակտով այդ արտոնությունն առնչվում է այն ուսանողներին, ովքեր 2012-2013 թվականներին ընդունվել են բուհեր եւ մինչեւ 2014 թվականի գարնանային զորակոչը ծառայում են բանակում: Զորացրումից հետո այդ ուսանողները կարող են ուսումը վերսկսել եւ ֆինանսավորում ստանալ:

Մենք գիտենք, որ պաշտպանության նախարարությունն իրավասու է փոխելու զորակոչման ընթացակարգը, հետեւաբար ծագում է կառավարության որոշումը փոփոխվող ընթացակարգին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը»,- հայտարարել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն:

Պարտադիր զինծառայություն անցած ուսանողների վրա արտոնությունների տարածումը կսահմանվի կառավարության որոշմամբ: Ուսանողներին սույն որոշմամբ նախատեսված արտոնությունները չեն տարածվի, եթե պարտադիր զինծառայության ժամկետը մինչեւ դրա ավարտը չի ընդհատվում ուսանողի կողմից կամ, ելնելով ուսանողի զորակոչումից հետո «Զինվորական պարտավորության եւ զինծառայության մասին» Վրաստանի օրենքի 29 եւ 30-րդ հոդվածներում նախատեսված պահանջներից:

Կրթության հարցերի փորձագետների խոսքերով, վերոնշյալ սկզբունքով ուսումնական գրանտների ստացումը կնպաստի ուսանողի բարեկեցության մակարդակի բարձրացմանը եւ կնպաստի երկրի բարօրությանը:

«Դա ողջունելի նախաձեռնություն է, քանզի շատ երիտասարդներ բարձրագույն կրթություն չեն կարողանում ստանալ միայն ու միայն ընտանիքի նյութական ոչ բարվոք վիճակի կապակցությամբ: Բացի նրանից, որ այդ որոշումը կարգավորում է առանձին ուսանողների ֆինանսական հարցերը, այն նաեւ դրական ազդեցություն է ունենում հայրենասիրական դաստիարակչության տեսանկյունից: Փաստորեն, ուսանողը մեկ տարով տարկետում է վերցնում եւ ծառայում է բանակում: Այսինքն, ուսանողը, ելնելով իր ընտանիքի նյութական իրավիճակից, ինքն է որոշում տարկետումը ձեւակերպելու եւ ապա մեկ տարի անց ուսումը շարունակելու համար ֆինանսավորման ապահովման հարցը»,- նշել է կրթական հարցերով փորձագետ Թամար Մոսիաշվիլին:

Փորձագետի խոսքերով, վերոնշյալ նախաձեռնությունը պետք է ընկալվի որպես ուսման ֆինանսավորման ուղի, որը սակայն չի կարելի միակը համարել, հարկ է շարունակել հնարավոր գրանտների շնորհման միտումը: «Դեռեւս Շաշկինի նախարարության օրոք մեկնարկեց՝ «Ուսուցանիր Վրաստանի համար» նախագիծը, ըստ որի երիտասարդներն սկսեցին աշխատել տարածաշրջաններում, դասավանդում էին տարբեր առարկաներ: Դրանից հետո այդ խմբին ավելացան այն մարդիկ, ովքեր ոչ վրացիներով հոծաբնակ երկրամասերում սկսեցին դասավանդել վրաց լեզուն եւ գրականությունը, ինչի համար նրանց գումարներ էին հատկացվում մագիստրոսի ակադեմիական աստիճանի ստացման համար»,- ասել է Թամար Մոսիաշվիլին:

«Բոլոր ընտանիքները չէ, որ նյութական հնարավորություն ունեն ֆինանսավորելու իրենց զավակների ուսուցումը: Բնականաբար, երիտասարդները պետք է ունենան ուսման վարձի այլընտրանքային աղբյուրներ ապահովելու հնարավորությունը, ինչը կարող է երկակի օգուտ բերել: Թեպետ գտնում եմ, որ այդ ուղղությամբ պետք է կիրարկվեն առավել երկարաժամկետ նախագծեր, որոնք կտարածվեն ոչ միայն զինծառայության, այլեւ մյուս ոլորտների վրա»,- եզրակացրել է փորձագետ Թամար Մոսիաշվիլին:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ